ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

08.12.2018 *Ք. Իջևան*

Մասնակցում էին գիտխորհրդի բոլոր անդամները.

ՕՐԱԿԱՐԳ

1. 2017-2018 ուստարվա առաջին քննաշրջանի նախապատրաստում: /Զեկուցող՝ Ա. Ներսիսյան/
2. 2017-2018 ուստարվա երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստման և անցկացման մասին: /Զեկուցող՝ Ա. Ներսիսյան/
3. Ընթացիկ հարցեր

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Ա. Ներսիսյանը: Զեկուցողը նշեց, որ ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները ավարտված են: Կազմվել է քննաշրջանի ժամանակացույցը, որը քննարկվել է ամբիոններում և ուսանողների շրջանում: Ամբիոններում քննարկվել և հաստատվել են հարցատոմսերը: Վերստին շեշտադրվեց քննությունների ընթացքում դասախոսների կողմից անաչառ վերաբերմունքը: Ուսանողը պետք է քննասենյակից հեռանա իր ստացած միավորի հավաստիության համոզվածությամբ: Դեկանը ՈՒԽ և ՈՒԳԸ ուսանողներին հորդորեց ներկա գտնվել քննական գործընթացներում՝ կանխելու հնարավոր սուբյեկտիվիզմը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ. Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը, մ.գ.թ. Լ. Հարությունյանը, Զ.. Վարտանյանը, Ռ. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2017-2018 ուստարվա առաջին քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցող Ա. Ներսիսյանը ներկայացրեց 2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը: Նշեց, որ այն քննարկվել է ուսանողների հետ: Զեկուցողը փաստեց, որ երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը ժամանակին տրամադրվել են ուսանողներին: Այժմ ստուգվում է ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը: Ստուգվում է ծրագրերի կատարողականը և դրան համապատասխան մատենավարության վիճակը: Նկատվում է, որ որոշ դասախոսների մոտ կան մատենավարական թերացումներ: Այդ բացերը քննարկման և շտկման փուլում են: Զեկուցողը խոսեց նաև ֆակուլտետում իրականացված դասալսումների մասին: Դասալսումներ պարբերաբար կատարվում են երիտասարդ դասախոսների մոտ: Արդյունքները քննարկվում են, կատարվում են եզրակացություններ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ. Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը, մ.գ.թ. Լ. Հարությունյանը, Զ.. Վարտանյանը, Ռ. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Ա. Ներսիսյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Վ. Աղաբաբյան